



Այնճարի Մէջ. Դասախօսական Հանդիպում՝ Երեւանի Պետական Համալսարանի Դասախօսներուն Հետ

0 Գաղութային November 6, 2015

PRINT EMAIL A- A+



Կազմակերպութեամբ ՀՅԴ «Կարմիր լեռ» կոմիտէի դաստիարակչական-քարոզչական յանձնախումբին՝ կիրակի, 1 նոյեմբեր 2015-ի երեկոյեան ժամը 7:00-ին, Այնճարի «Մուսա լեռ» սրահին մէջ տեղի ունեցաւ հանդիպում գրոյց մը Երեւանի պետական համալսարանէն խումբ մը դասախօսներու պատուիրակութեան հետ:



Ձեռնարկին բացման խօսքը արտասանեց Յակոբ Այնթապլեան: Ան շնորհակալութիւն յայտնեց դասախօսներուն, որոնք Լիբանան եւ Այնճար հասած են համակարգելու համար Հայաստանի մէջ իրենց ուսումը շարունակելու փափաք ունեցող ուսանողներուն գործնական քայլերը:

Ան հրաւիրեց Երեւանի պետական

համալսարանի հայագիտական հետազոտութիւններու հիմնարկի փոխտնօրէն դոկտ. Մհեր Յովհաննիսեանը՝ ծանօթացնելու դասախօսները: Ապա յատուկ դասախօսութեամբ հանդէս եկաւ Երեւանի պետական համալսարանի պատմութեան բաժանմունքի դասախօս Գեղամ Պատալեան, որ մանրամասն տուեալներով ներկայացուց Մուսէօյի հայութեան թուային պատկերը Մուսա Լեռան հերոսամարտին նախօրեակին: Ան արխիւային փաստաթուղթերու միջոցով հաստատեց, որ օրուան մարդահամարին համաձայն, Մուսա լեռան հայութեան թիւը շատ աւելի է, քան 6000-ը. բաւարար փաստեր կան հաստատելու շուրջ 10 հազար մուսալեռցիներու ներկայութիւնը շրջանին մէջ:

Դասախօսական հանդիպումէն ետք դասախօսական կազմին հետ հանդիպում մը տեղի ունեցաւ «Մ. Զէյթեան» կեդրոնին մէջ, ուր քննարկուեցան Այնճարէն հայագիտական ուսման հետեւելու փափաքը ունեցող ուսանողներու՝ Երեւանի մէջ ուսանելու կարելիութիւնները:

Ներկաները հիրասիրուեցան Մուսա Լեռան աւանդական ուսելիքներով:

»